

# ՄՇԱԿ

Տարեկան դիմել 10 բուլլի, կէս տարեկան 6 բուլլի:  
Առանձին համարները 7 կողմերով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».  
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը լսող է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և առաւօտեան օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են  
խրաբանչիւր բաւին 2 կողմերով:

ԱՌԱՋԻԿԱՅ 1890 ԹԻԱԿԱՆԻՆ

## ՄՇԱԿ

### ԴՐԱՅԻՆՆԵՐԵՐ ԵՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԼՐԱՅԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիմելով և նոյն պարագրաֆում Մշակ ամսագրում ենթադրաբար:  
ՀԱՅԿԱՅԻՆ ՄՇԱԿԻՆ: Տարեկան դիմել 10 բուլլի է, վեց ամսական 6 բուլլի:  
Դրան «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՍՐԱԳՐԱՍՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկիւնում, Թամարիսի տանը):  
Կայտարարութեան ուրիշ քաղաքներին «ՄՇԱԿԻՆ» գրվում համար պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանային. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

#### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մեր հասարակաց հաստատութիւնների գոյութիւնը.— Ներքին ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Սուրբ Վարդանի ուխտը. Գիտութեան ամբիոնը. Նամակ Ղուկասին. Ներքին լուրեր.— ԱՐՏԱԿԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Պատմա-գիտական միջնակարգական հայկացիները. Արտաքին լուրեր.— ԽՍՐԱՆ ԼՈՒՐԵՐ.— ՀԱՅԿԱՅԻՆ ՄՇԱԿԻՆ.— ԲՈՐՈՍՏ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակներ թիւրքաց չայատանից:

#### ՄԵՐ ՀԱՍԱՐԱԿԱՅ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՈՒԹՅՈՒՆԸ

Մեր հասարակաց հաստատութիւնները, առհասարակ, երկար չեն տևում: Ինչ հաստատութիւն ունենում էր վերջերէն լինի դա բարեգործական մի ընկերութիւն, մի լրագրող կամ ամսագիր, լինի դա թատրոն կամ դպրոց.— բոլորն էլ սկզբից կարծես աճում, ծաղկում են, բայց մի քանի տարուց, նոյն իսկ մի քանի ամիսից յետոյ սկսում են մարել, սկսում են մեռնել, ոչնչանալ:

Այդ անմիջապէս երևոյթը նրանով է բացատրվում, որ մեր հասարակութիւնը սովորութիւն ունի սկզբից ջնքմ կերպով

համակերպ գործին, բայց շատ շուտով ըսկսում է ստուգել դէպքի գործը: Թատրոնը սկզբից սաստիկ յաճախվում է.— բայց շուտով դաժնիքը դատարկ է մնում և ներկայացումներ այլ ևս չեն տրվում: Լրագրող կամ ամսագիրը սկզբից շատ բաժանորդներ է ունենում.— բայց շուտով բաժանորդների թիւը սաստիկ պակսում է և լրագիրն ու ամսագիրը կամ դադարեցնում են իրանց գոյութիւնը և կամ ստիպված են տարուց տարի քաջքնել իրանց ողորմելի գոյութիւնը: Ընկերութիւնը սկզբից շատ անդամներ է ունենում.— բայց շուտով անդամների թիւը պակսում է, նուազում է և ընկերութիւնը կամ փակվում է, կամ շարունակում է աննպատակ կերպով ամենբից մոռացված, թշուառ ապարդիւն գոյութիւնը...:

Մեզանում ոչ մի լրագիր կամ ամսագիր երբեք վեց, եթէ տարուց աւելի գոյութիւն չէ ունեցել: Միակ լրագիրը, որը բան և հինգ տարի գոյութիւն է ունեցել, դա հանգուցեալ «Մեղու չայատանի» լրագիրն էր... Բայց ի՞նչ գոյութիւն... ամենաթշուառ, ամենաողորմելի գոյութիւն...:

#### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

#### ՆԱՍՏԱԿՆԵՐ ԹԻՐԻՔԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

X

Վան, հոկտեմբերի 20, 188...

Բարեկամ,

Գնացի Ջըմի-Ջըմի մաղարան էլ տեսայ, մի ընդարձակ քաղաք է Յայնկոյանի եկեղեցու կից բլրակի վրա, մի մուգ ունի բլրակի կատարից ստեղծված և ոլորուն, մի կլոր լուսամուտ էլ հարաւային կողմը:

Քաղաքից փոքր ինչ հեռու գտնվում են բազմաթիւ փորվածներ, զրանք անդլիական հիւպատոս Բլէյթին և վանքիները փորվածներն են, որտեղից յայտնվել է մի կատուն, որի քանդված քարերը մի հայ աղայի շնորհով այժմ դարձրել են մի տաճկի տան հիմքը և դռան առջևը, այդ փորվածներից հանվել են վահաններ, կարմիր ամաններ, կարասներ մոխրով լցված, փրկողներ, դարձրել, կուռքերի կտորներ և այլն, սակայն այժմ ոչ կռատան նշանը կայ և ոչ իսկ քարերից մի կտոր, միայն երևում են մեծ աղբւսներով շինած պատերի և հրդեհից տնուկ դարձած իրերի կտորներ, նոյնպէս և կոտորված կալաններ, որոնց կտորներով ծածկված է բլրակը:

Այստեղ է եղել Չարլզ-Ֆէլիկ կոչվող անցքը, որը, ասում են, խրվածն է չարիկը փակել է առեւի, որովհետեւ շատերը մտել են այնտեղ և չեն վերադարձել:

Այդ բոլորը տեսնելուց յետոյ պահ մի բարձ-

րացայ չձակ քար) կոչվող բլրակի գագաթը, ժողովելի ծաղիկներ և այնտեղից նայեցի Վանի վրա:

Սքանչելի է այս երկիրը, այլ կողմից փոխված է կոհակներով լիճը և նրա մօտ ցցած միակ բլուրը, որի վրա է բերքը, առջևը Վանը իր ծառերով, որոնց մէջ աները չեն երևում, հեռու Ուստանը, Ալթամար, Լիւմ, Կուտը, Աւաթը... աւելի հեռուն մշուշապատ Սիւփանը իր ձիւնապատ դադարով, այն Սիփանը, որը բաղմաթիւ առասպելների նիւթ է մատակարարել և որին տեսնելով միշտ յիշում եմ քրդական մի գեղեցիկ և տխուր երգ... Այս բոլորի շուրջը փակված են ծառադարձ այգիներ, կանաչադարձ մարգագետիններ, բազմաթիւ վճիռ վտակներ, գետակներ և ծաղիկադարձ բլրակներ:

Բաւականութիւնը խիստ հարուստ է Վասպուրականում. տանիների տաճարներ տեսականքը, Արտամիտի անուշահոտ խնձորից բացի ամեն տեսակ խնձորենի, ստղարենի, խաղողի և այլն այլն շատ տեսակ պտղատու և չբարձր և ուռնի ծառերը բանել են այդ տարածութեան մի մասը. պարբեր հողի մէջ ցանված ցորենի և դարու, կանճրակի և ոսպի, գլուխ և սիսեռի դաշտերը զրաւել մի մասը, կանաչ երկարահասակ խոտերով և դանդաղ կիկիզանի դոյներով ծաղիկներով մարգագետինները մի ուրիշ մասը... այս բոլորի միջից օձապտոյտ հոսում են արեւի տակ փայլող անհամար գետակներ և վտակներ: Մնացել են բլուրներն ու լեռները, որոնք աւելի ևս չքեր են, նրանց վրայից կարելի է քաղել կարմիր ու դեղին և երկրագոյն տնթաւումը, բարձր և զաւիւր, նեւ և բարձր, խիւր և զաւիւր,

Քաջքնելով իր թշուառ, ամենբից արհամարհված, ամենբից մոռացված գոյութիւնը, այդ լրագիրը իր կեանքի ընթացքում երեք անգամ փոխել է իր դիրքը և երեք անգամ իր խմբագիրները և վերջն այնտեղն է հասել, որ ստիպված էր խափանվել ունենալով ընդամենը 150 բաժանորդ...:

Այդպէս է ամեն բան մեզանում: Եւ ոչ թէ միայն հայոց հասարակութեան մէջ, բայց և ուր հասարակութեան մէջ: Կարդացէք ուր հասարակաց գործիչների կեանքի պատմութիւնը ու նրանց հասարակաց գործունէութեան նկարագիրը.— Եւ դուք կը համոզվէք մեր ասածների ճշմարտութեան մէջ: Սկզբից հասարակութիւնը ջնքմ կերպով համակրում է նրանց գործունէութեանը, բայց շուտով սառնում է և սկսում է վերին աստիճանի անտարբեր կերպով վերաբերվել դէպքի գործը: Հետեւապէս գործիչներն էլ երկար ժամանակ չեն դիմանում իրանց աշխատանքին, շուտով յոգնում, զզվում, յուսահատվում են և թողնում են իրանց ձեռնարկութիւնները:

Մտաբերութիւնը, շարունակ եռանդը, շարունակ տոկոսութեան, դէպքի հասարակաց շահերը շարունակ հետաքրքրութեան բացակայութիւնը, յատուկ է հասարակական զարգացած կեանք չունեցող, հասարակաց ողի չունեցող ազգերին, որոնց թիւում և մենք հայերս կարող ենք մեզ հաշել:

Այդ է պատճառը որ, օրինակ, «Մշակ» գոյութիւնը մի արտասովոր երևոյթ, մի չեղած բան կարող է համարվել հայերի մէջ. տասն և եօթ տարի շարունակ, մի և նոյն անձի ղեկավարութեամբ հրատարակվող հայերէն թերթը, որը առաջին տարուց սկսած մինչև տասն և ութերորդը կարողացած շարունակ պահպանել իր դիրքը հասարակութեան մէջ, կարողացած այդքան տարիների ընթացքում հաւասարապէս զրաւել ժողովրդի հետաքրքրութիւնն ու համակրութիւնը, պահպանվել շարունակ մի և նոյն մակերեսով վրա, ոչ թէ միայն չը կորցնել, այլ տարուց տա-

րի թէ և թուով քիչ, բայց այնու ամենայնիւ հետզհետեւ բազմացնել իր բաժանորդները.— այդ տեսակ երևոյթ մի արտասովոր բան է հայերի մէջ: Այո, արտասովոր բան է տեսնել հայերի մէջ մի հասարակաց ձեռնարկութիւն, որ տասն և եօթ տարի գոյութիւն ունենար, և այն էլ ոչ թէ հետզհետեւ մեռնելով, մարելով, այլ թէ ոչ աչքի ընկնող կերպով առաջ գնալով՝ գոնէ պահպանվելով միշտ մի և նոյն մակերեսով վրա...:

Կրա պատճառը մենք վերագրում ենք այն իրողութեան, որ հայոց հասարակութեան մէջ սկսում է վերձագէտ խոր արմատներ դնել ինքնաձայնագրութիւնը, ըսկսում է երեւնալ զիտակցական ձգտումն դէպքի առաջ, դէպքի ինքնաձայնագրութիւնը, դէպքի հասարակաց կեանքի բարեօրոյն, սկսում է յայտնվել անյայտելի հակումն դէպքի լուսաւորութիւնը, սկսում է պահանջ զգացվել դէպքի հասարակաց կեանքի արագընթաց զարգացումը:

Մեզ մնում է ցանկանալ որ մեր հասարակութիւնը նոյնպիսի անշուք հաւատարիմ և տոկուն կերպով վերաբերվել և դէպքի մեր բոլոր հասարակաց ձեռնարկութիւններն ու հաստատութիւնները, ինչպէս նա վերաբերվում է տասն և եօթ տարի շարունակ դէպքի «Մշակ» գոյութիւնը: Առ այժմ չէ կարելի չը խոստովանվել, որ «Մշակ» գոյութիւնը մեր բոլոր հասարակաց ձեռնարկութիւնների մէջ այդ կողմից մի բացառութիւն է կազմում: Բայց եթէ հայոց հասարակութիւնը նոյն տեղական համակրութեամբ և տոկուն հետաքրքրութեամբ վերաբերվել և դէպքի թատրոնը, և դէպքի բարեգործական և այլ օգտակար ընկերութիւնները, և դէպքի դպրոցները, և դէպքի հրատարակական ընկերութիւնը, և դէպքի միւս բոլոր լրագիրներն ու ամսագիրները, և դէպքի արհեստների, առևտրի, երկրագործութեան ու արդիւնաբերութեան կանոնաւոր զարգացումը, և դէպքի զբաղարան-ընթերցարանները, և դէպքի երկրեցական ու հոգաբարձական գործերը, և վերջապէս դէպքի համամարդկային մշտա-

«Սպանդ» բոյսի համար, որը շատ վատ հոտ ունի, ասում են թէ միայն զոհերի գերեզմանների վրա է բուսում. այդ մասամբ ճիշդ գտայ, որովհետեւ այդ բոյսից միայն գերեզմանատների մէջ տեսայ և այն էլ ոչ ամեն գերեզմանի մօտ: Հայկալանը եկեղեցու մօտ մի մեծ հրապարակ կայ, որ առաջ գերեզմանատուն է եղել.— այդ տեղ ևս լեցուն են լայնադմբերով: Փայտնեթէօքէն լեռների մէջ մի տեղ ինձ ցոյց տուին այդ բոյսից. այդտեղ մի քանի տարի առաջ սպանվել էին ջուրդերից շատ մարդիկ...:

Վանի մէջ ամեն տուն, համարան, ունի իր մօտ մի պարտեզ, ուր կան պտղատու ծառեր, իսկ քաղաքի հարաւային կողմը փակվում են ընդարձակ խաղողի այգիները. ոչ շատ հեռու Ալի-փիի քարի (այս քարն ևս ունի իր առասպելը) ժողով անցնելով կարելի է գնալ Շաղպաղի, ուր բնակիչները միայն զբաղվում են զինեցործութեամբ, բայց և նշանաւոր են արեւելոյթեան մէջ. պատմում են թէ այդտեղացիք մի օր պատարադի համար մի շիշ զինի փնտռեցին և չը գտան... կանայքն անհամայնապէս խմում են այդ անոյշ զինին, որ կարծես շուր լինի:

Արտամիտը տալիս է խնձոր, Շաղպաղին՝ զինի, Բանտիմահու գետը.— ձուկ, Վանի այգիները՝ պտուղ, Քաջբերդիցը.— ցորեն և ալիւր, Շաախը, Մոխը.— բոլորը Վարազի լեռը.— ծաղիկներ և քաղցրահամ ջուր, Ս. Գրիգորի վանքի շրջակայքը.— խաւրճիկ կոչվող լայն տերևներով թթու բոյսը, բանջարները... Արի, բարեկամ, աւրի աչքիդ այս դրախտի մէջ և մեռնենք այստեղ...:

Մտադիր եմ այս նամակովս փոքր ինչ էլ խօ-

\*) Այս ծաղիկից միշտ ջուր է դուրս գալիս և ժողովուրդը ասում է թէ ծաղիկը լալիս է, դրո՛ համար իսկ նրա անունը կնքել են չբարձր:

կան յառաջագոյն ընթացքն ընդհանրապէս, —այն ժամանակ մեր հասարակաց կեանքը չէր գտնվի այն անմիջական վիճակի մէջ, ինչ վիճակի մէջ որ նա գտնվում է այժմ:

Գ. Ա.

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՈՒՐԲ ԱՎՐԱՆԻ ՈՒՍՏԸ

Արաբար հայ գիւղը 350 տուն բնակչութիւնով գտնվում է Գարաշիւղի բաժնում Այդ գիւղի ժողովուրդը իր թէ ներքին և թէ արտաքին կազմակերպութեամբ, առաջին տեղն է բռնում Գարաշիւղում: Արաբար գիւղը իր սուրբ վարդան կոչված եկեղեցու անունով տակ վերապահում է շատ ժամանակից ի վեր նախնական և խորհրդաւոր մի աւանդութիւն: Գա մեր նախնիք ջաջ նահատակները մինի յիշատակին վերաբերեալ, եթէ կարելի է այսպէս ասել, ներկրական մի նշան է:

Ինչպէս վերը ասեցինք, Արաբար գիւղի եկեղեցին կրում է սուրբ Վարդան անունը, ուր գործնվում է գրքի մեծութեամբ մի փոքրիկ սև քար, որը այդ գիւղացիներին հայրերը ու պապերը սերունդից 60 տարի առաջ ուսուցողական պատերազմի ժամանակ, երբ գաղթել են դէպի այս կողմ, իրանց հետ բերել են այստեղ: Յիշեալ քարը, ժողովրդի ասելով, վերադառնում է Արաբարի դաշտից—Տըմուտ գետի ափերից, Վարդանանց մեծ պատերազմից յետոյ, ուր նահատակվել է քաջ Վարդան զորավարը, դուռն է այն նպատակով, որ քաջ Վարդանի արեան կաթիլները թափված կը լինեն այդ իսկ քարի վրա: Գրա համար մենք մի որոշ տեղեկութիւն չունենք, սակայն հաւանական է ասել, որ այդ քարը վերցրած է Աւարայր դաշտից, գուցէ իբր յիշատակ քաջ Նահապետի, որի անունով և կառուցված է Արաբար գիւղի եկեղեցին:

Բնականաբար պէտք է ասել, որ ռամիկ ժողովուրդը քաջ Վարդանի յիշատակը անմոռանալի պահելու համար, պաշտօնի կերպով մինչև օրս պահել է այդ քարը իր եկեղեցում, համարելով նրան իբրև քաջ նահատակի մարմնի մի մասունք և այդպիսով այժմ գրեթէ մի հոգակաւոր ուսուցանող է դարձել այստեղ: Ուստի Վարդանի անուն տարի կատարվում է համարեա միաժամանակ—հոկտեմբերի վերջերին և տեղական լիզուով կոչվում է Ս. Վարդանի ուխտ:

Հոկտեմբերի 29-ին այդ հրաշալի ուխտի օրն է: Ուստի Վարդանի անթիւ քաղցութիւն խոնկել էր այդ օրը սուրբ Վարդանի դուռը: Շրջակայ գիւղերից հասակաւոր մարդ, կին, երիտասարդ, հարս ու աղջիկներ փոքրիկ երեսմաներով հան-

դերձ խումբ-խումբ շտապում էին դէպի այդ ուխտատեղին—Արաբար: Գրանց մէջ մենք շատ տեսանք ոտաբորիկ կանայք, որոնք ամենաջերմ սիրով ընթանում էին դէպի սուրբ Վարդանը: Գրանք այն կանանցից էին, որոնք ուխտել էին, իրանց «մարդը» առնելու համար, այն է՝ որդի ունենալու համար, ոտաբորիկ գնալ մինչև սուրբ Վարդանի դուռը: Ուստի Վարդանը, բացի Գարաշիւղի շրջանից գալիս են նաև ուրիշ հեռու տեղերից և նոյն իսկ Նոր-Բայազետից և իր շրջակայ գիւղերից: Այդտեղ քիչ ուխտաւոր չեն գալիս և Երևանից, Ուստի Վարդանի շտապը, մանաւանդ երիտասարդները, ուրախութիւն ու զէֆ են անում: Այնպէս գիւղը զբոսնում է անվանական ամեն տեսակ երաժշտական ներդաշնակ ձայներով: Պապական դպի ու գուռնէն, նայը, ջուլթալը, սողը և այլն մէկը միւսին հակառակ հնչում են ազգային երգերի եղանակներ: Գրանց ձայնը երկու օր, գիշեր ցերեկ լսվում է: Լռելու տեղի է ունենում միայն եկեղեցում՝ պատարագ եղած ժամանակ:

Չէ կարելի չը նկատել, որ սուրբ Վարդանի անունը և նրա ուխտը այնպէս ամենաբերու կապերով կապված է Գարաշիւղի աղագնախոթութեան սրտի հետ, որ եթէ դարձնենք այդ ժողովրդի գլխով, դարձեալ այդ ուխտագնացութիւնը, որը կրում է «սուրբ Վարդանի ուխտ» անունը, աւելի ու կընդհանրանայ: Այդ նուիրական ուխտը նշանակութիւնը ապագայումն է: Այնքան աւելի խորը կը թափանցէ այս կողմի հայրերի սրտում, որքան ուսումը և մտաւոր դարձացումը կը տարածվի գիւղական հասարակութեան մեջ ծաղկեալով, քանի որ այդպիսի աւանդութիւնների և սովորութեան պատմական իսկական նշանակութեան հասկանալը կապված է ժողովրդի մտաւոր հորիզոնի լայնանալու հետ:

Գ. Ս.

### ԳԻՆՈՒ ՅԵՏ ԱՇԽԼԸ

Մեր վերջին յօդուածը Ֆերմանտացիայի մասին էր և միայն նրա յաջորդ յօդուածը կարող էր ամփոփել այդ հարցի դադարաւորը: Այժմ ամփոփում ենք ընդհանուր մեր յօդուածներն նախօրոք դժած կապը և առժամանակ մի կողմ թողնելով Ֆերմանտացիայի, պոլիպիմերի, շիբատան և տակաւանների մասին անթիւքները, անցնում ենք գինու յետ ամենուրեք գործողութեանը: Այդ գործողութեանը երկուսում չգինին կրտել են՝ անուանում:

Պարզ է, որ շիբան ամաններ ամենուր յետոյ բարձ ի թող չը պիտի անել: Շիբան նախ ենթարկվում է եփին, ֆերմանտացիային, չաքարը վերջնական է ալքոոլի, ստացած հեղուկը, որ նոր գինին է, կամայ կամայ պարզվում է և

պատճառն այն է, որ շիբայի գանազան շիբանում լողացող անթիւքների և անթիւքի մարմինները ինչու են ամանի յատակը՝ շիբայի շիբա անցնելով: Եթէ մի օր և է պատճառով այդ տակը նստած մարմինները տեղից չարժենք, ներանք նորից կը տարածվեն գինու մէջ և նորից կը պլուտեն: Ուրեմն նախ գինին այդ տակը նստած մարմինների վրա թողնելուց կարող է ենթարկվել նորից պլուտելու վտանգին: Բացի այդ կայ և մի այլ անյարմարութիւն, այն է, որ տակը նստած մարմինների մէջ գտնվում են զանազան ֆերմանտացիաների սերմեր, որոնք կարող են դարձնել, նորից եփ առաջացնել, որը և կարող է գինին քայքայել: Այնպէս այժմ մենք խոսեցինք տակաւնի՝ որին դիւր, լի են առում նոյնպէս, վնասների մասին, բայց արդեօք այդ երկու պլուտուր վնասներից յետոյ դիւրը ոչ մի օրոտ չունի, ոչ մի լաւ ազդեցութիւն չունի գինու վրա: Կասենք որ այժմ, ունի և անհա յիշեալը կարմիր խաղողի մասին է, —սպիտակ գինու մասին կը խոսենք յետոյ—այն ժամանակ պէտք է յիշել, որ շիբան սկզբում անցում է և գինիների ու շատ անգամ չանցելի հետ խառն է: Գինին նոյնպէս որ գոյն տուող գիւղաների կաշիներն են և չանցելու մատակարարում են դառն մասեր: Այժմ կարմիր գինու գոյնը շատ մեծ նշանակութիւն ունի նրա արժանաւորութեան վրա, քանի գինին թուրը գոյն ունենայ, այնքան նա աչքի զիւր կը գայ և մեծ գին կուսնայ: Միւս կողմից եթէ շիբան գուրի է դառն մասերից, այն ժամանակ պէտք է այդ պակասը չանցելու մէջ գտնված դառն մասերով լրացնել, այնպէս որ երկու զիւրեւեռում էլ անհրաժեշտ է որ շիբան դիւրի վրա լինի մի առ ժամանակ: Բայց այդ ժամանակը պէտք է սահմանափակել, որպէս զի սկզբում յիշած երկու վնասներն չեն թարկվեց և բացի այդ որպէս զի չափից դուրս մեծ քանակութեամբ դառն մասեր չը լուծվեն գինու մէջ, ապա թէ ոչ շատ կոշտ չը ամալործ հաճ կուսնայ: Բացի դրանից նոյնպէս այդ ժամանակը սահմանափակելու համար պէտք է ի նկատի ունենալ և շիբայի և ալքոոլի լուծվելու Ուրիշ խօսքով՝ շիբայից ստացած պարզ գինին դիւրից բաժանելու համար անհրաժեշտ է սպասել որ չաքարն ամբողջապէս վերջնական ալքոոլի, հետեալով որ ֆերմանտացիան բոլորովին վերջացած լինի, երկրորդ որպէս զի գոյնը բաւարար և համը ամբողջ լինի և ոչ թէ կոշտ:

Մի որոշ ժամանակամիջոց չէ կարելի սահմանել յետ ամենուր համար, որովհետեւ դա կախված է նախ նրանից թէ եփը, ֆերմանտացիան շուտ է կատարվում վերջանում, թէ ոչ, և յետոյ արդեօք ժողովուրդը աւելի տապաւուն և աւելի թուրը գոյն ունեցող գինի է պահանջում, թէ ոչ: Այնպէս որ այդ հարցը վճռելու համար միշտ

նրճրակի կաթով եփված պասլայ կերակուրները, գիւղ... Թիւրաց-Շայաստանում այժմ որտեղ չեն հազում Վանի էֆանային և միմայի-կուն կտորները, առաջատի և անկողին համար գործածում Վանի կտաւը: Այո, այս բոլորը կան այս հարուստ երկրի մէջ. դեռ ևս չեն յիշում ոսկերչութեան, քանդակագործութեան արդիւնքները, հիւանդի շինած պատուական կահ-կարասիքը... արդէն վերջին երկու արհեստները ծաղկած են այստեղ, միւսները գտնվում են անկեղծ վիճակի մէջ:

Երգերով Վան մտնում են բոլոր եւրոպական պարանքներից բացի, կարմիր և դեղին կօշիկներ, ձիու առաւանդակներ և էֆանային, մտնում է նաև «բաստըրման» (պուլիտ) և «սոսուլը» (աղիքներ) մէջ լցրած ծեծած միւս, կալլաս), որ միայն յատուկ է Երգերովին և այնտեղ կան մեծամեծ գործարաններ, որոնց սխտորը մատակարարում է նորէն Վանը:

Վանի մէջ կան նաև երկու գործարաններ, որոնք պատիւ են բերում քաղաքին և շուտով գուցէ փակվին, եթէ Ստամբուլ չը զթայ նրանց: Պարթևներին կաշիի գործարանը, որ Վանի ծայրից մտնում է մորթը և միւս ծայրից ելնում են կաշիները, ինչպէս այստեղ սովոր են ասել, այս օրերս նրա արտադրած կաշին փորձել տակնը, լաւ կաշի է և մտադրութիւն կայ նրա տեսակներից Երգերով և Կ. Պոլսի ուղարկել: Խեղճ գործարանատէրը, որը ուսել է և թիֆլիսում, այժմ զբաղված է զինուորների համար 400 զոյք կօշիկ կարելով, որոնց վերջեր ստանալու շուտ կտակածում է և տուրք մուծութեան մէջ է գտնվում: Կը կործանվի, եթէ չը վճարեն,

պէտք է առաջնորդվել ժողովրդի ճաշակով, նրա պահանջներով:

Գրա համար մենք կը բերենք միայն մի քանի օրինակներ՝ ֆրանսիայի մի քանի նշանաւոր գիւնեգործական շրջաններից: Օրինակ, Երմիտաժում (Ermitage) գինին 40 օրից յետոյ են յետ ածում, Ժիւրայում (Jura) մի քանի ամսից յետոյ (3 ամիս և երբեմն աւելի), հարաւային Ֆրանսիայում 6—8 օրից յետոյ, բայց նոյն իսկ այդ մասում գտնված Նարբոն քաղաքում 25 օրից յետոյ են յետ ածում, որովհետեւ ժողովուրդը աւելի թուրը գոյնաւոր գինի է պահանջում, Բուրգունդիայում 10 օրից յետոյ:

Ընդհանրապէս պէտք է գինին յետ ածել եթէ աղմկալից կամ գլխաւոր եփը վերջացել է ու գոյնը և համը բաւարար է:

Սպիտակ գինու յետ ածելի ուշ է կատարվում, մանաւանդ որ սպիտակ գինու և կարմիր գինու պատրաստութեան մէջ մի հիմնական դիմադրանքութիւն կայ, այն է, որ սև գինու շիբան նախ եփ է գալիս և ապա ջաջայից բաժանվում և լցնում տակաւնները, այն ինչ սպիտակ գինու շիբան անմիջապէս բաժանվում է ջաջայից և ուղղակի լցնում են տակաւնները: Գրա համար աւելի ժամանակամիջոց է հարկաւոր սպիտակ գինուն, որ կաղմիլի, այնպէս որ հարաւային Ֆրանսիայում սպիտակ գինին յետ են ածում մի ամսից յետոյ, այն ինչ կարմիր գինին 6—8 օրից յետոյ: Ժիւրայում 2 ամսից յետոյ: Բացի դրանից նախելով թէ ինչ տեսակ գինին են պատրաստում, ըստ այնմ աւելի կամ պակաս ժամանակ են գինին դիւրի վրա թողնում: Գլը-խաւորապէս կան 3 տեսակ սպիտակ գինիներ՝ չոր (le vin sec), քաղցր (le vin de liqueur) և փչիչան (le vin mousseux): Չոր գինի պատրաստելիս շուտ ուշ են յետ ածում, երբեմն և ուշացնում են 3 ամսից մինչև 8 ամիս, այն ինչ սպիտակ և փչիչան գինի պատրաստելիս աւելի շուտ են յետ ածում, որպէս զի բոլոր շիբայի մէջ գտնված չաքարը ամբողջապէս չը վերջանալի:

Յաջորդ անգամ կը խօսենք յետ ածելու եղանակի և հարկաւորված ու գործածելի գործընթացի մասին: Գրանց յետոյ կանցնենք նորից հերթական յօդուածներին՝ ֆերմանտացիային:

Մ. Մուսիկան

### ՆԱՄԱԿ ՂՈՒԲԱՅԻՑ

Հոկտեմբերի 18-ին:

Առաջին ձիւնը եկաւ Ղարայում ամսիս 15-ին գիշերով, շարունակվեց միւս օրը ցերեկով և այժմ գետնը սառած սառալից ցրտեր է անում: Վառարանները տներում սկսել են արդէն վառել, տաքացնել տները: Շուտ մեղ հասնող ձիւնը, —թէ և այժմ աշունք է, այնու ամենայնիս

որովհետեւ այդ անխնջ երիտասարդը եկել է իր հայրենիք, պարտք է արել և շինել գործարանը, որտեղից պիտի կարողանայ գործարանը գրաւել ազատել. ուրիշ ճար չը կայ, աղօթել պէտք է այս Պարթևների համար, Ալլահը նրան փրկէ վաշխառուների ձեռքից...

Մի ուրիշ գործարան ևս կայ, —մետաքսագործութեան գործարան է: Նրա տէրը ունի մի ընդարձակ այգի, ուր կանոնաւոր կերպով մշակում է հազարի չափ թթենիներ, արտադրում է բոժոժը, հանում է թիւղ, ոլորում է իր իսկ ձեռքով շինված գործիքներով և հանում է մետաքսային գործուածքները: Բայց ո՞վ պիտի առնէ նրա այգին գթաւից: Միայն գործում է հագուստի համար կտորներ և հազիւ իր և իր խեղճ ընտանիքի փորը է կշտացնում, բուսական զարգացած մի մարդ է, եղել է Շամախի, ուր և մետաքսագործութեամբ է զբաղվել, սովորել է Պուրսայում (Չիլիւսիայի մօտ) այնտեղ գտնվող գործարանների մէջ. ունի նաև ժաքարի ծաղիկներ գործող մեքենաներ: Այս գործարանները տեսնողը ուրախանում է, բայց երբ լսում են որ պարտք ունեն և գրաւել տակ են, յուսահատվում են, որովհետեւ այս երկրներում անտեսական այս անձուկ վիճակով, ճանապարհների այս անկանոն դրութեան մէջ շատ զոժաւոր է վաշխառուի ճանկերից տգատվել...

Աւարո

\*) Արեւալու պահաւոր:

ձմեռվան ցրտեր են լինում—երկու կողմից էլ թէ փնտռելով, թէ ոգուտ մեզ բերեց: Անասը հասկացվում է նրանով, որ կասկածի ծովի վրա երթնելով լինում կտրվել է. նաև սառել է և Վճրվել ենք: Ուրեմն Ղուբայի արտադրած մթնոլորտները, ինչպես են՝ տանձ, խնձոր, չորացրած տանձ, չորացրած սալոր, չորացրած բալ, չորացրած թխու կամ լաւաշանայ, ընկող, ընկողափայտ, կաշուեղէն և այլն կարող են մնալ Գերբէնտում առանց հասնելու իրանց ծախվելու տեղը, այն է Ատրախան: Այդ հանգամանքն ինքն ըստ ինքեան ապացուցանում է, որ փնտա կարող է պատճառել և ոչ ոգուտ,—քանի որ ուշագործութեան պիտի առնուի և այն, որ այս բոլորէն Գերբէնտում պահանջ չը կայ այդ մթնոլորտները,—այն ինչ, ընդհակառակն, կայ պահանջ նոյն իսկ Ղուբայում, ուր կիկ են գնդերն Բազուկից: Այստեղ խնձորի պուրը 25 կոպ. յանկարծ բարձրացաւ 60 կոպէկի. կարելի է ենթադրել, որ էլ աւելի բարձրանայ: Լաւ գնով ծախվել են նաև սուպին պարտիաների. մթնոլորտները Ատրախանում, արկը (5 պուր) խնձորի, տանձի—7—8 բուրլի: Մեծ քանակութեամբ արտահանվել են այս տարի Ղուբայի մթնոլորտները Գերբէնտ, Ատրախան: Գարեջուրը սկսվելուն պէս՝ ճանապարհները բացվելուն պէս սկսվել են ապրել բեռնաւորվել ու ճանապարհով: Հաստատ ճիշդ հաշիւներն անտեղեկ ենը,—բայց պարզ հաշից, սայլերի քանակութիւնից և մթնոլորտների որակութիւնից կարող ենք ենթադրել միանգամայն, մտաւորապէս միջին թիւով, որ արտահանած ապրանքները կը լինեն երկու հարիւր հազար պուր: Պակաս գնով է ծախվել կաշուեղէնը Նիմֆի տնտեսականութեան Անգլոսոնիք մի րազուկից թուրք խնձոր առնելու գիտաւորութեամբ գնում է Նիւգէյի գիւղը, բայց այնտեղ թուրքերից իսկոյն կողոպտվում է:

Ձմեռվայ բերած ոգուտը այն տեսակետից պիտի հասկանայ,—որ նա այժմից սկսել է բուսել տարածված հիւանդութիւնը և վերականգնեցնել առողջապահութիւնը: Ղուբայի հրէական թաղում վաղուց ի վեր, երբորդ ամիսն է ահա, ինչ տարածվել էր բացառաւորապէս հիւանդութիւնը,—մեծ գոհեր տանելով հրէայ մանուկներին: Բժիշկները խորհուրդ էին տեսել հրէաներին քաղաք մտնելն արգելել: Այդ պատճառով էլ սաստիկ հակադրութեան կար—հրէաները մնացել էին իրանց թաղում,—պատճառ նրանց գալով հիւանդութիւնը և տարածվել նոյն իսկ Ղուբայի մէջ,—քանի մի դէպքեր են եղել բկացաւում և տեսնում հիւանդացոյցների, բայց բազմաթիւ պահանջ ունիւն և զոհ չէ եղել:

Երկու խօսք հրէաների թաղի մասին: Այդտեղ տները, կամ աւելի լաւ է ասել խրճիթները, իրար վրա կուտակված՝ հին, միջնադարեան ստիլով են կառուցված: Հրէաների մեծամասնութիւնը աղքատ տարրից բաղկանալով՝ անտանելի, անասելի աղքատ է և նրանց նիստ ու կացը: Կենտրոն թշուառ, աղքատ... Օրինակ՝ մի քանի հրէաներ իրանց բազմաթիւ ընտանիքներով տպուում են ինչ, փորոված գետնափոսերի մէջ, որոնք ամիս յարմարութիւններից զրկված են: Խոհանոց, արտաքին, ճաշարան, ննջարան հենց մի և նոյն գետնափոսի սենեակն է կազմում խղճուկ հրէայի բնակարանը,—երբեմն վերջինը դառնում է և դռն հորթի, կամ իշուկի համար: Այդ գետնափոսերի կառուցման վրա ուրիշ հրէաների տուններ են կառուցված՝ դարձեալ հին, ծուռ ու մուռ չինուածքներով: Երբեք յարկի տները կառուցելը երկրորդ յարկի համար դառնում են և արտաքին և էլյան (теплица) և իր տան բազը և այլն:

Շատ քիչ տներում են լինում արտաքիններ, իսկ մեծ մասամբ ծառայում են այդ տան վերջին մասը կամ բազերը, ուրիշ հրէաների տների կառուցման, կամ իրանց բնակարանները,—կամ թէ մի առուակ, որ հասնում է միշտ մեծ փողոցի վրա և սարսափելի գարշառնութիւն է բուրում: Այդ առուակը մի քանի տների արտաքիններին արտադրութիւնն է, որ անհողապէս հրէաները անկողն թողնում են և ամիսներից յետոյ՝ երբ գործընթացում է նա, դարձել հոտով ու աղոտեղութեամբ և ապականում: Օրը ինքն ըստ ինքեան յայտնի է, թէ առողջապահութիւնը ինչ կանոններով է պահպանվում այստեղ հրէաների թաղում և պակաս չէ լինում տարին, որ նա անցնէ՝ առանց մի անարափոխիկ հիւանդութեան,—որինով անցեալ տարիները զոհ տարան շատ մարդկանց՝ կարմուկ, տիֆ, հարկը հիւանդութիւնների, իսկ

այս տարի գիշերները—բկացաւ: Վերջերս մի պոլիցիան սկսել է սաստիկ ուշադրութիւն դարձնել Ղուբայում հրէական թաղի վրա. հատաբար դատաւորը ուժի հրէաներին իրանց տան առաջ անմարդութիւն պահելու համար 400 բուրլի տուգանքի ենթարկեց, իւրաքանչիւրին 50-աւանդութիւնը հրէական թաղում իր ուժը բանցնել և ուժեղ լինել,—պոլիցիան կարող է արդեօք իր ընդունած միջոցներով առողջապահութիւնը պահպանել: Մեր կարծիքով ոչ մէկը և ոչ երբեք՝ հրէաներ որ Ղուբայի հրէական թաղի տները և զիջքը այդ տեսակ կը մնան, ամենայն հիդիւնաւ, առողջապահութիւն անոյժ է և նոյն իսկ պոլիցիայի միջոցները թող, ամենայն տեսակ տարափոխիկ հիւանդութիւնների, էլյանի միջոցով տարածվելու դէպք:

Մ. Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հոկտեմբերի 6-ին, ինչպէս մեզ գրում են Գերբէնտից, թեմական առաջնորդ Միսրոյմ արքեպիսկոպոս Սիւրբանոս զաւրով Գերբէնտ՝ այդ քաղաքի հայոց եկեղեցում պատարագ մատուցեց և կրթութեան վարարները ձառ խօսեց:

Ինչպէս մեզ գրում են՝ ՂՈՒՐԵՐԻ շրջականներում աւազակներն անպակաս են: Այս օրերս Դերբէնտից դէպի Թիֆլիս գնացող փոստը աւազակները կողոպտեցին: Փոստում եղել է մինչև 5000 բուրլի: Մարդկանց չեն վնասել:

Մեր թղթակիցը Գերբէնտից գրում է մեզ հետեւեալը. «Այս տարի այգեկութիւնը շատ շուտ վերջացաւ, մինչդեռ նախընթաց տարիները այգեկութիւնը տնում էր մինչև հոկտեմբեր ամիսը: Այգեկները անցեալ տարւոյ ստացած խաղողի 1/3 մասը հաղւ են ստացել: Գինները շատ լաւ են և յոյս կայ որ անցեալ տարվանից աւելի թանկ վաճառվեն: Այժմ հոկտեմբերի կէսն է և եղանակը մեղմանում սաստիկ ցրտել է արդէն և ձիւն է տեղում»:

Մեզ խնդրում են ապագրել հետեւեալը. «Կարգաւով ձեր լրագրի № 120-ի մէջ դետեղված լուրը Թիֆլիսի Մոզնու եկեղեցու երեցիքին առաջարկութեան մասին՝ վերցնել եկեղեցում գանձանակ չըլցնելու սովորութիւնը, չենք կարող մեր կողմից ցանկութիւն չը յայտնել, որ Թիֆլիսի միապառ եկեղեցիների երեցիքները օրինակ առնելին Մոզնու եկեղեցու երեցիքին և վերջ տալին վերոյիշեալ անյարմար սովորութեան»:

Կ. Պոլսից ստացանք հետեւեալը. «Եւրոպական լրագիրներից շատերը հաղորդում են, որ իբրև թէ Վիլհելմ կայսրի անսակցութիւնը թիւրքաց սուլթանին հետ քաղաքական բնաւորութիւն չէ ունեցել, և որ առհասարակ այդ տեսակցութեան ժամանակ քաղաքական հարցեր չեն յարուցված: Այդ ճիշդ չէ: Հաստատ աղբիւրից կարող ենք հաղորդել ձեզ հետեւեալը. Վիլհելմ կայսրը, թէ անձամբ և թէ կոյն Հէրբերտ Բիսմարկի միջոցով քաղաքական շատ հարցեր է չօշակել թիւրքաց մայրաքաղաքում եղած ժամանակ: Ի միջի այլոց զերմանական կայսրը երկար խօսակցութիւններ է ունեցել թիւրքիայի և Գերմանիայի յարաբերութեան, կրեաթի հարցի մասին, և ուրիշ խնդիրների մասին: Այն ևս յայտնի է, որ Վիլհելմ կայսրը շատ զոհ է մտացել իր քաղաքական բանակցութիւններին հետևութիւնը»:

Նոյեմբերի 5-ին, խալապի երեկելի կոմպոզիտոր Վերդիի կրած ծախական գործունէութեան յիսնամակի առթիւ թիֆլիսի օպերային թատրոնում ներկայացվեցան՝ «Տրուբադուր» օպերան մի տեսարան՝ «Գոն-Կարլոս» օպերայից, և «Էրմանի» օպերայի մի գործողութիւնը: Ներկայացման մասնակցութեան էին օպերային խմբի համարեա բոլոր լաւ ուժերը: Ներկայացումը բաւական տալիք անցաւ, մեծ դուրսով լինեց պատճառելով հասարակութեանը: Լիւբաւատիլէ, Լաւրենտի երգչուհիները, և այլ. Վանդերլի, Տրուբադուր, Կոլապատիլիսի և Վերդիի բուռն ծախականութիւններ ստացան: Մանաւանդ ֆրանսիացի տեսնոր Վանդերլիի այդ երկուց անվերջանալի ծախականութիւնները առաւելայ դարձաւ. պէտք է նկատել, որ այդ երգիչը առհասարակ զրեղ տղ:

պաւորութիւն է թողնում հասարակութեան վրա: Նոյեմբերի 3-ին Թիֆլիսի նահանգական դատարանի բաժինը Շուկալէր դեղում ի միջի այլոց քննեց Ջալալ-Օղլու նախկին քննիչ Կամալականի ապանութեան գործը, որը տեղի է ունեցել արանից քանի մի տարի առաջ, այն է 1883 թվին: Այս անգամ վերջապէս այդ գործը վճռվեց: Սպանութեան մէջ մեղադրվում էին Ջալալ-Օղլու, Նախկին պոլիցիական պրիստով Աստաֆիեւ, ջալալօղլիներ՝ Տէր-Գրիգորեան, Մատթէոսեան, և Ալամեան: Գատարանը հետեւեալ վճիռը դուրս բերեց, մեղաւոր ճանաչելով՝ Աստաֆիեւին զրդոված դրութեան ժամանակ քննիչ Կամալականին սպանելու մէջ, իսկ Տէր-Գրիգորեանին և Մատթէոսեանին այդ սպանութեան դէպքը չը յայտնելու մէջ—Աստաֆիեւին աքսորել իրկուսակի նահանգը, իսկ Տէր-Գրիգորեանին և Մատթէոսեանին բանտարկել մի տարով, զրկելով մի քանի իրաւունքներից: Մեղադրվող Ալամեան արդարացրած է: Կրա հետ միասին դատարանը որոշեց միջնորդել թագաւոր Կայսրի առաջ, որպէս զի Աստաֆիեւի վերոյիշեալ պատիժը փոխարինվի 8 ամսվայ բանտարկութեան, առանց իրաւունքներից զրկելու:

Մեզ հաղորդում են, որ շուտով Թիֆլիսում բացվելու է մի նոր տպարան պ. Տիգրան Նաղաբեանի ձեռնդրով: Այդ տպարանի հայերէն մասի համար տառեր բերել են տուած արտաստանից: Տպագրական գործը Թիֆլիսում և առհասարակ կովկասում այնքան անգարագած դրութեան մէջ է, և մեր տպարանները՝ շատ քիչ բացառութեամբ այնքան յետ են մնացած՝ պատուէրները շուտով և էժան կատարելու կողմից, որ նոր և լաւ տպարանների բացվելը ոչ թէ միայն աւելորդ չէ, այլ և շատ հարկաւոր:

Շատերը մեզ դիմում են հարցնելով, թէ ինչու են Թիֆլիսի հայոց դանադան ընկերութիւնները խոր քննի մէջ են ընկնել և համարեա ոչինչ չեն չինում խօստովանում ենը, որ մեզ էլ ոչինչ յայտնի չէ հայոց մեծ ծառուէն ընկերութիւնների լեւ տարգիւ կայան քննի պատճառների մասին, ուստի և կատարելով մեզ դիմողների ցանկութիւնը՝ հրապարակով դիմում ենք մեր «կանոն և արանց» ընկերութիւնների ղեկավարներին հարցնելով՝ «տիկներն և պարոններ, ինչու էք քննել...»

Փոստահետադրական գլխաւոր վարչութիւնը վճռել է զաւ տարվանից մեծացնել հեռագրական ցանցը, անցկացնել հեռագրական նոր գծեր՝ 559 վերստ տարածութեան վրա:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՀՊԱՆՈՒԱԿԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՑՔԻՆԵՐԸ

Վերջին օրերում Լճուղիի մէջ արտասանած իր ճառով անգլիական պահպանողական մինիստրութեան ղեկավարը Լորդ Սոլսբերի, ինչպէս երևում է կամեցել է աւելի ֆուրոր հանել, քան թէ բաւականութիւն տալ տատանվող դրութեան մէջ գտնվող Եւրոպային և քաղաքական խաղաղը դարձած ազդեցին:

Վերջին գոյութիւն ունեցող դրութիւնը պէտք է այդպէս էլ մնայ, ամեն բան առաջվայ նման պէտք է լինի, եւրոպական խաղաղութիւնը ապահոված է, սուրի չը կայ որ և է փոփոխութեան դիմելու: և այլ այսպիսի քաղաքական որոշ նախադրութիւններով լի է մինիստր-նախագահի վերջին ճառը, որով նա ցանկացել է մի փոքր փոփոխեց պատճառել եւրոպական դիվոմատիական շրջաններին:

Սակայն լորդը իր նպատակին չէ հասնում իր ճառով, և նրա ճառը այնքան միանշանակութեան կարող է պատճառել եւրոպական հասարակաց կարծիքին, որքան և իշխան Բիսմարկի անվերջանալի «միլիտարիզմ» քաղաքականութիւնը:

Վերջին դրութիւնը անփոփոխելի պիտի մնայ, խաղաղութիւնը ապահոված է, քանի որ պետութիւնների արեւած երկրներին սահմանների մէջ փոփոխութիւններ չեն մտնում, և այլ այդպիսի պատգամները զեղեցիկ են, եթէ միայն գործնականութեան մէջ էլ նոյնքան զեղեցիկ լինելի և զրկական—սակայն իրք այդպէս չէ: Եթէ մինչև

անգամ անգլիական պահպանողական մինիստրութիւնը սրտով էլ ցանկանում լինէր եւրոպական խաղաղութիւնը երկարատե տեսնել, դա անկարելի է, քանի որ պետութիւնների միջադրային յարաբերութիւնները և այդ յարաբերութիւնների հիմքը, դանադան դաշնագիրները, խախտվում են, չեն իրագործվում, մեծած տառ են մնում, և այդպիսով ոչնչացնում են այն բուրբը, ինչ որ կարող է ծառայել խաղաղութեան գործին:

Կրկնում ենք, զիտար է հաւատալ ազնւափայլ Լորդի խօսքերին, քանի որ, ինչպէս պատմութիւնը պարզ կերպով ցոյց է տալիս, այն, ինչ որ չէ իրագործվում դիվոմատիական ճանապարհով, վաղը կամ միւս օրը պէտք է իրագործվի ուրիշ գործի միջոցով:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Անցնելով Ատրախայով, կոմս Հերբերտ Բիսմարկ քաղաքական մի քանի հարցերի մասին խորհրդակցութիւն ունեցաւ ունգարական մինիստր-նախագահ Տիսսայի և կոմս Անդրաշի հետ:

—Վերջին օրերում Պարիզում կրկին բուլան-ժեաները մի քանի ցոյցեր արեցին, և վճռել են աւելի մեծ ցոյցեր անել: Կառավարութիւնը վրձնել է կտրական միջոցներ ձեռք առնել՝ այդ բանին վերջ տալու համար:

—Յունաց թագաւորանիցին Գերմանիայի կողմից չնորսված է Սե Արժի շքանշանը:

—Բէլգրադից գրում են, որ Միլան նախկին թագաւոր երկար չի մնայ Սերբիայում, բայց այնտեղից հեռանալով, նա շուտով էլ չի այնտեղ կը վերադառնայ, անձամբ վերահսկելու մի քանի գործերը վրա:

—Աթէնքից գրում են, որ հասարակաց կարծիքը պահանջում է, որ կառավարութիւնը վրձնական կերպով միջամտի Կրետէի հարցում, և օգնի կրետացիներին իրանց ձգտումը իրագործելու:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի բժիշկներից մէկին հարցնում են. —Բժիշկ, ինչպէս էք, ոնց են ձեր գործերը: —Փառք Աստուծոյ, լաւ են, հիւանդները շատ են, պատասխանում է բժիշկը:

\*\*\*  
Ձինական Ձին-Չու քաղաքում նորերս պատահած հրդեհից այրվեցան 12,000 տուն և սպանվեցան 150 հոգի:

\*\*\*  
Նորերս վախճանված յայտնի ֆրանսիացի բրժիշկ Րիկոր ֆրանսիական բժշկական ակադէմիային կտակել է 10,000 ֆրանկ, Պարիզի անդամահատական ընկերութեան—5,000 ֆրանկ և ֆրանսիայի բժիշկների ընկերութեան—10,000 ֆրանկ:

\*\*\*  
Սպանիան էլ ուրիշներից յետ չէ ուղում մնալ. սպանիական կառավարութիւնը վճռել է կաղմակերպել միջադրային իրաւաբանական կոնգրէս:

\*\*\*  
Բերլինում պէտք է հիմնվի մի ձեւարան, որի գլխաւոր նպատակը պիտի լինի նպաստել յատկապէս գերմանական լեզուի դարգացմանը և մշակմանը:

\*\*\*  
Պարիզի այս տարվայ համալսարանային ցուցահանդէսը, որին ներկայ լինելու համար Պարիզ էին եկել միլիոնաւոր մարդիկ, մի առանձին բազը ունեցաւ, և նրա գոյութեան միջոցին ոչ մի դժբաղդութիւն չը պատահեց, ոչ հրդեհ, ոչ գնացքների ընդհարում, ոչ մի տարափոխիկ հիւանդութիւն: Ահադին Պարիզը ինչպէս միշտ, այդ ժամանակամիջոցում էլ կարողացաւ պարզերս դուրս գալ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏՈՐԻԱՅԻՆ ԴՈՐՈՒԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐՈՒԹՅՈՒՆ, 3 նոյեմբերի: Նոյեմբերի 1-ից բացված են փոստահետադրական խնայողական արկղերը Նովորոզում, Լիւբանիում, Տիւրում, և ուրիշ շատ տեղերում: Երեկ վաղանակեց բժշկութեան պրոֆեսոր Լիւբովալը: «Гражданин» լրագրի լսել է, որ պետական խորհրդին ներկայացրած է մի նոր օրինադր, որը վերաբերում է ընդհանրապէս այն հրէաներին, որոնք տպարան

են հրէաների բնակութեան համար որոշած սահմաններում:

ԱՅՆԵՐԻ, 3 նոյեմբերի Պատգամաւորները ժողովը վերջացրեց Կրեմլի հարցի ընթացքը, և դրանից յետոյ 72 ձայնի առաւելութեամբ ընդդէմ 54-ի հաւաստիք յայտնեց միջնորդութեան:

ՉԱՐՋՈՒՅ, 3 նոյեմբերի Բուխարայի ռուսաց լիազոր գործակալը հարց է յարուցել Կովկասեան տարանջիւղը բանալ անցնող ճանապարհի մի քանի մը լեռները համար:

ԽԱՐԿՈՎ, 3 նոյեմբերի Հարաւային Ռուսաստանի հանրապետականութեան 14-րորդ ժողովը նախագահութեամբ ղեկավարելի ստատսկի սովետիկ Տասկինի, զուգարկելու է նոյեմբերի 10-ին Գնեթեան գլխաւոր հարցերը լինելու են. հանքային վառելանիւթերի և աղի պահեստներ հիմնելը, հանքերի և գործարանների մօտ տանող ճանապարհների շինելը, առևտրական նաւատորմի կարգաւորելը և օժանդակող կառաների օգնութեամբ բանտերներին գրաւելը:

ՊԱՐԱՎ, 3 նոյեմբերի Չինական սէյմը անվաւեր համարեց բոլոր գերմանացի պատգամաւորներին լիազորութիւնները:

ԿԱՆԵ, 4 նոյեմբերի Մեծ Իշխան վաղիմիր Ալեքսանդրովիչը այսօր ուղևորվեց Ջենովա:

ՊԱՐԻՉ, 4 նոյեմբերի Այսօր առաւօտեան Պարիզ հասաւ Ռէշալ պրինցը:

ԼԻՍՍԱԲՈՒՆ, 4 նոյեմբերի Ամայիւթ թագուհին արու դաւակ ծնեց:

ՆԻԻ-ԵՐԻ, 4 նոյեմբերի Այստեղի առևտրական ֆերմաներից մինը Ռիօ-դել-Ճանիյոյից ստացել է մի հեռագիր, որը հաղորդում է որ այդտեղ յեղափոխութիւն է ծագել. այժմեան դրութեան տէրը զօրքն է. միջնորդութիւնը հրաժարական է տուել: Յիշատակութեան նպատակով հանրապետութեան հաստատելն է:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 նոյեմբերի Բօրտա, կալուածական բանկերի գրաւական թղթեր.—Թիֆլիսից 97 3/4, Գուրայիսից՝ 98 3/4. Թիֆլիսի քաղաքային կրեդիտային ընկերութեան օրվա գայիւնները 84 1/4:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 նոյեմբերի «Новое Время» լրագիրը լսել է հաւաստի արբերից, որ Գերմանիայում սիմիոնի և զօրու գնեցը բաւական բարձրանում են. աւելի պակաս հաճարի գնեցը:

ՏՈՒԼՈՒՆ, 5 նոյեմբերի Ծովային նոր միջնորդը հրաման է ուղարկել, կարողութեան չափ, շտապեցնել այդտեղի նաւամատուցներում շինվող նաւերի կառուցումը:

ԽԱՐԿՈՎ, 5 նոյեմբերի Այստեղ մի նոր հաստատութիւն է բացված խողերը մօրթելու համար, խողերի մի անդինները Եւրոպա վաճառահանելու նպատակով: Գործի գլուխ է կանգնում Սոտման Համբուրգից:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 նոյեմբերի Պետական խորհրդին ներկայացրած է մի նախագիծ, որի նպատակն է կապեան-վոլգայի աւազանի ձկնահանութեան բարելոմը:

ԲՈՒԽԱՐԱՅ, 5 նոյեմբերի Միջնորդների մեծամասնութեան դիմադրութեան պատճառով, առաջարկված է արձակել պատգամաւորների ժողովը: Կատարվի հրաժարական տուելը: Նոր միջնորդութեան կազմակերպելը յանձնված է Մանուէր Գնեքալին:

ԼՈՒՆՈՒՆ, 5 նոյեմբերի Ռիօ-դել-Ճանիյոյի յեղափոխութեան լուրը հաստատվում է. յեղափոխութիւնը սկսվեց զինուորական ապստամբութեամբ: Ծովային միջնորդը վտանգաւոր կերպով վերաւորված է. միւս միջնորդները ձերբակալված են. հանրապետութիւն է յայտարարված, հաստատված է ժամանակաւոր կառավարութիւն, որը իսկույն միջոցներ ձեռք առաւ կայսերական ընտանիքը ապահով դրութեան մէջ ընկելու համար:

ՌԻՕ-ԴԵԼ-ՃԱՆԻՅՐՈ, 5 նոյեմբերի ժամանակաւոր կառավարութիւնը հրատարակեց մանիֆէստ, որով յայտնում է, թէ Բրազիլիայում ոչնչացրած է կառավարութեան միապետական կառուցվածքը, յայտարարվում է, թէ մտադրութիւն կայ խուսափել ամեն տեսակ անկարգութիւններից և հաղորդվում է, որ զանազան դատաւորից ըստացված են բազմաթիւ յայտնութիւններ, որոնցով հաւանութիւն են տալիս կատարված յեղափոխութեանը: Միջնորդները խորհրդի նախկին նախագահը ձերբակալված է: Կայսրի հետ կը վարվին մեծ յարգանքով:

ԲՈՒԽԱՐԱՅ, 5 նոյեմբերի Նոր միջնորդութիւնը կազմված է: Մանուէր Գնեքալին գործերի միջնորդ և միջնորդական խորհրդի նախագահ, Լազովարի—բորտային գործերի միջնորդ: ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 նոյեմբերի «Journal de St. Petersburg» յայտնում է իր ցար Բրազիլիայի կայսրի գահընկեց լինելու անիմով և երկուց է յայտնում որ Բրազիլիան երկար ժամանակ կը զրկվի խաղաղութիւնից և ապահովութիւնից, որոնք հաստատված էին կայսրի թագաւորութեան ժամանակ:

ՌԻՕ-ԴԵԼ-ՃԱՆԻՅՐՈ, 6 նոյեմբերի կայսրը իր ընտանիքով երկ ուղևորվեց Եւրոպա:

ՎԻԵՆԱ, 6 նոյեմբերի Բուխարայի ներկայացրին Գալիցիայի ժողովին մի բողոք՝ բուխարական աղբի իրաւունքները խախտելու պատճառով:

ՌԻՕ-ԴԵԼ-ՃԱՆԻՅՐՈ, 6 նոյեմբերի Ալեքսան Է որ կայսրին բռնի կերպով են ստիպել Եւրոպա ուղևորվելու: Գործերը խախտված են, բանկերը և մասնաւոր անձինք գործերից խուսափում են: Առևտուրը անշարժ դրութեան մէջ է Բահիա նահանգը ընդգէմ է հանրապետութեան միանալուն:

ԱՅՆԵՐԻ, 6 նոյեմբերի Թագաւորացի Յեսարիւնը այսօր «Աղմկաւ Նախիմով» նաւով ուղևորվեց Վենցիա:

| Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՏԱՆ                             |            |
|---------------------------------------------------|------------|
| Նոյեմբերի 3-ին                                    |            |
| Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէն . . . . .              | 93 ր. 80 > |
| Բեռլինի վրա 100 մարկ . . . . .                    | 46 > 5 >   |
| Փարիզի վրա 100 ֆրանկ . . . . .                    | 37 > 50 >  |
| Ռաբի . . . . .                                    | 7 > 59 >   |
| Մաքսային կապուցներ . . . . .                      | 151 > — >  |
| Արծաթ . . . . .                                   | 1 > 10 >   |
| Բօրային դիսկոնտներ . . . . .                      | 6 և 70/0 > |
| Պետակ. բանկ. 50/0 տոմս 1-ին շրջանի . . . . .      | 98 > 50 >  |
| — — — — — 2-րդ . . . . .                          | 98 > 50 >  |
| — — — — — 3-րդ . . . . .                          | 98 > 75 >  |
| — — — — — 4-րդ . . . . .                          | 98 > 50 >  |
| — — — — — 5-րդ . . . . .                          | 98 > 50 >  |
| — — — — — 6-րդ . . . . .                          | 98 > 50 >  |
| Նոր 40/0 . . . . .                                | 83 > 75 >  |
| Արեւելեան 50/0 փոխառութ. 1-ին շրջ. . . . .        | 99 > 12 >  |
| — — — — — 2-րդ . . . . .                          | 99 > 37 >  |
| — — — — — 3-րդ . . . . .                          | 99 > 37 >  |
| Ներքին 50/0 առաջին փոխառութ. . . . .              | 244 > — >  |
| — — — — — երկրորդ . . . . .                       | 233 > 75 > |
| 5 1/2/0 բէնտա . . . . .                           | 101 > 75 > |
| Ոսկեայ բէնտա . . . . .                            | 172 > 25 > |
| Եօթնրորդ կոնսոլիդ. փոխառ. . . . .                 | 141 > 25 > |
| Նոր երկաթուղային բէնտա . . . . .                  | 99 > 25 >  |
| 50/0 գրաւական թղթեր կալուած. . . . .              | — > — >    |
| — — — — — փոխ. կրեդ. ընկ. միւս . . . . .          | 147 > 75 > |
| — — — — — թղթայ. . . . .                          | 92 > — >   |
| Գրաւ. թղ. Ալեք. բանկի . . . . .                   | 98 > 12 >  |
| Գրաւական բանկի . . . . .                          | 101 > 50 > |
| 60/0 գրաւ. թղ. Թիֆլիսի—27 և 43տ. . . . .          | — > — >    |
| — — — — — Գուրայիսի—18 և 43տ. . . . .             | — > — >    |
| Ս. Պետերբուրգի քաղաքային օրվա-գայիւններ . . . . . | 94 > — >   |
| Մօսկայի քաղաք. օրվա գայիւններ . . . . .           | 94 > — >   |
| Օդէսայի . . . . .                                 | 93 > 75 >  |
| Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրվ. . . . .            | — > — >    |
| Ս. Պետերբուրգի բօրային տրամադրութիւնը թող է:      | — > — >    |

Խաղաղութիւնը հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱՐԱՐԱՅԱԿԱՆ ԽՈՐՀԱՐԿԱՐԱՆԻ մէջ նոյեմբեր ամսի 22-ին, երեկոյան 8 ժամին կը լինի աճուրդ (առանց կրկնաձեռքի) կապով տալու այժմեան դպրոցի ներքնայարկի մի սենեակ իր նկուղով, որ գտնվում է III Ալեքսանդրեան թաղում Հին փոստային փողոցում: Պայմանագրով կարելի է կարգաւորել հրապարակութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակէից և տօներից, ցերեկայ ժամը 10-ից մինչև 12 ժամ:

3—3

## Պ Ա Տ Կ Ե Ր Ա Ջ Ա Ր Դ Ա Ր Ջ Ա Գ Ա Ն Ք

Ներկայ 1889 թուականի Դեկտեմբերի ողբերգ, կառավարութեան թուղտութեամբ, «ԱՐՋԱ-ԳԱՆՔ» շաբաթագիրքը կը սկսի հրատարակվել ՊԱՏԿԵՐԱՋԱՐԿ: Պատկերազարդ «Արձագանքը» կը հրատարակվի այժմեան ծրագրով, աւելի մեծ զերբով և աւելի ճոխ բովանդակութեամբ: Լոյս կը տեսնէ շաբաթը մի անգամ, կըրակի օրերը: ՊԱՏԿԵՐԱՋԱՐԿ «ԱՐՋԱԳԱՆՔ» կը պարունակէ հետեւեալ պատկերները և նկարները. 1) Պատկերներ հայրենի և օտար ժամանակակից ու պատմական գործիչների, հռչակուած պետական ծառայութեան, զինուորական, գրականութեան և զեղարուեստի տաղանդներում: 2) Պատկերներ տրձանների, զանազան տեսարանների և պատմական զեղարուեստական նկարների: 3) Ուրուագծեր, զօգրութիւններ, լուսանկարներ տեղագրական և հնագիտական բովանդակութեամբ: 4) Ճարտարապետական, գրաւարկական և զրօշարկական նկարներ և պատկերներ: 5) Ծածկանկարներ և բաւարարողութիւններ:

ՊԱՏԿԵՐԱՋԱՐԿ «ԱՐՋԱԳԱՆՔ» համար Պետերբուրգում գործին հմուտ անձերից կազմուած է մի առանձին յանձնաժողով. որ պիտի մատակարարէ պատկերների փորագրութիւնները: Առաջիկայ տարուայ համար արդէն պատուիրուած են և շուտով կը ստացուին մեր ծրագրին համեմատ բազմաթիւ պատկերներ:

ՊԱՏԿԵՐԱՋԱՐԿ «ԱՐՋԱԳԱՆՔ» կը տպագրուի ընտիր և յատկապէս պատուիրուած թղթի վրայ: Տպագրութիւնը կը լինի պ. Յովհ. Մարտիրոսեանի տպարանում, որ առաջիկայ տարուայ փոքրիկ կ'ունենայ արտասահմանից բերած նորագոյն յարմարաւոր մեքենաներ և հայրենի ճոխ և բազմաթիւ տառեր:

ԲԱՃԱՆՈՐԿԱՅԻՆ է տարեկան ՏԱՍՆ բուրձի, կէս տարւանը վեց բուրձի: Առաջին տարւայ բաժանորդները թերթն կը ստանան 1889 թ. դեկտեմբերի 1-ից մինչև 1891 յունվարի 1-ը, այսինքն մի տարի և մի ամիս: Այստեղ բաժանորդագրութիւն չէ ընդունվում: Թիֆլիսում բաժանորդագրութիւն ընդունվում է խմբագրութեան մէջ, Կենտրոնական գրաւաճառատնոցում և խմբագրի մօտ (Փոխադարձ վարկի ընկերութիւն): Օտար քաղաքներից պէտք է դիմել՝ Тифлисть, «Редакция еженедельнаго иллюстрировааннаго журнала «Ардзаганк», իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien illustré «Ardzagang»:

1—2

Յայտարարվում է ի դիտութիւն թարգմանիչների, որ արդէն թարգմանված է ռուսերէնից «ԴԱՆԱՅ» զրբերը: Թ. Ստեփոնեանց:

1—2

Լոյս տեսաւ Մ. Զաչեանի կազմած  
ԾՈՑԻ-ՈՐԱՅՈՑ  
1890 թ.

(Հանգուցեալ Ստեփաննոս Պալասանեանի պատկերով) Հետեւեալ բովանդակութեամբ:

I) Բաժանմունք. 1) Հանգուցեալ Ստեփաննոս Պալասանեանի յիշատակին 2) Ուղերձ. Գ. Սունդուկեանի յօդոսների առթիւ: II) — 1) Փրկչական 1890 թ. 2) Զորս եղանակ. 3) Առնառատագրութիւն. 4) Խաւարմունք արեւելեան և լուսնոյ. 5) Էփեմերէի 1890 թ. գուշակութիւն. 6) Հայոց շարժական և անշարժ տօներ. 7) Ընդարձակ օրացոյց, ամիսների բացատրութեամբ և գուշակութեամբ: III) — 1) Պատկեր խորհուրդ կատարելու արգելված օրերը. 2) Պալոցական արձակմունք. ա) Տօնը եկեղեցական. բ) Տօնը կայսերական. 3) Ժամանակագրութիւն. ա) Համաշխարհային նշանաւոր անցքերի և զիւտների բ) Հայոց պատմութեան նշանաւոր անցքերը. 5) Ռուսաց կայսերական տունը. 6) Կովկասի կառավարիչներ. 7) Հայոց հողեւոր կառավարութիւնը. ա) Կաթողիկոսներ. բ) Պատրիարքներ. 9) Էջմիածնի սինհոդոս, դ) Թեմական առաջնորդներ. 8) Համառօտ տոհմների աղիւսակ. IV Երազհան և V Յայտարարութիւններ:

Գինն է 15 կոպէկ:

1—3

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES  
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.  
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՎԱԳԱՅՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ  
(ՄԵՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)  
Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ:  
Ուրբաթ, 10/22 նոյեմբերի ԲԱԹՈՒՄԻՑ զուրս կը դնուի շուքնաւ. COMBODGE (ԿԱՄԲՈՋ) նաւապետ REMES (ՐԵՄԵՍ), մանրով Կ. Պօլիս, Պորտ-Նաւոս և Լաւանդա: Աճնանները՝ ԲԱԹՈՒՄԻՄ Կ. Գ. ԷՍՍԵՆՏԵՐ, ԹԻՖԼԻՍԻՄ ԳԵՈՐԳ. ՀեքՈՒԲԵԱՆ, ՀեքՈՒԲԵԱՆ, իսկ ԲԱԹՈՒՄԻ մէջ ԳՈՒԿԼՈՒՍԸ:

2—2

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԽՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ  
Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ  
(Կուկիւս, Վօրոնցովի արձանի հանդէպ)  
Հիւանդներին ընդունում են ամէն օր

Ա Ռ Ա Ռ Օ Տ Ն Ե Ր Ը

ՐՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեկոյց և կանանց ց.  
ԿԻՆԻՃԻՆԻ ԻՍԱՀԱՅԵԱՆ—11 1/2—12 ժ. կանանց և երեկոյց ց.  
ԲԵՆԿԻԼՍԿԻ—11—12 ժ. անկանց, կողորդի, քթի ց. և սիֆիլիսի (վիրաբուժ. և ատամնաբուժ.)  
ԱՐՏԵՄԻՆԵՎ—12—1 ժ. երեքարթի, ուրբաթ և կիրակի, կանանց ց.  
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեկոյց ց. բացի կիրակի:

Ե Ր Ե Կ Ո Ն Ե Ր Ը

ԳԱՐՈՒՍԿԻ—5 1/2—7 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.  
ՓՈՒԿԼԻՆԵԱՆ—5 1/2—6 1/2 ժ. ներքին, երեկոյց և ջղային ց. (էկկորոտիւրապիա):  
ԲԵՆԿԻԼՍԿԻ—7—8 ժամ.  
Հիւանդանոցում են մտնի կարար ձեռնէր՝ Երկանցի ան և Արտաղեան:  
Ճար—50 Կ. Համալիրորդի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ:  
Հիւանդանոցի փոխ-վերահսկող ԲՈՒԴԿՈՎՍԿԻ

## Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Մի հայ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որը արտասահմանեան մի դպրոցում ուսում առած է, որը հմուտ է անգլիերէն, ֆրանսերէն, հայերէն և թիւրքերէն լեզուների, ցանկաւորում է ԹԻՖԼԻՍԻՄ կամ յիշեալ լեզուների մասնաւոր տներում դասաւոր լինել կամ որ և է առևտրական հիմնարկութիւններում հաշուապահութեան և օտար լեզուների գրագրութեան պաշտօն վարել:

Հասցէի համար դիմել կամ «Մշակի» խմբագրութեանը, կամ պ. Ալեքսանդր Ստեփանեանցին, Զուրալովի քարվանսարայում:

6—10